ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/98

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2024 թ. N 98

ԵՐԵՎԱՆԻ Ն. ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 2 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «**Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ**» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Նոր-Նորքի 2-րդ զանգված, Մոլդովական, 37ա

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. փետրվարի 15-ին քննարկեց «**Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ**» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ, ՄՈւՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	13 հունվարի 2023 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	02 մայիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	26-29 հունիսի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	06 սեպտեմբերի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	28 հոկտեմբերի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ **«Կառավարում և վարչարարություն» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «**Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ**» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջն իրականացնում է 8 միջին մասնագիտական և 1 նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր ըստ ՈԱՇ-ի 3-րդ և 5-րդ մակարդակների:

Աշխատաշուկայի պահանջներից ելնելով, 8 միջին մասնագիտական կրթական ծրագրերից 3-ը ներդրվել են վերջին երեք տարիների ընթացքում, 1 ՄԿԾ իրականացվում է դուալ ուսուցմամբ:

ՄԿԾ-ները համապատասխանում են Պետական կրթական չափորոշիչներին, ակնկալվող վերջնարդյունքները՝ ՈԱՇ-ին:

Դասախոսական կազմի մեծ մասը կիրառում է դասավանդման և ուսումնառության ինտերակտիվ մեթոդներ, թեև նշված մեթոդները կրթական ծրագրերում ներառված չեն: Ուսումնական նյութերը, բացի տեսական գիտելիքից, պարունակում են գործնական առաջադրանքներ: Պրակտիկաների բազաները բազմազանեցված են և առկա է ակտիվ կապ գործատուների հետ: Շրջանավարտների մեծ մասն աշխատում են իրենց մասնագիտությամբ:

Կրթական ծրագրերն իրականացնելու համար ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովված է համապատասխան որակավորում ունեցող դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմով: Հաշվի առնելով քոլեջի ուսանողների թվի աճը և նոր մասնագիտությունների ներդրումը,

վերջին 2 տարիների ընթացքում քոլեջը մրցույթային կարգով աշխատանքի է ընդունել 20-ից ավել դասախոս, որոնց մեջ կան նաև գիտությունների թեկնածուներ:
Որոշ նոր բացված մասնագիտություններում դեռևս առկա է մասնագետների ներգրավման խնդիր:
Կրթական ծրագրերի իրականացման համար ներկայումս քոլեջն ունի անհրաժեշտ ռեսուրսներ և քայլեր է ձեռնակում դրանց բարելավման ուղղությամբ:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը,***

ՄՈՒՀ-ն ունի սեփական նպատակներն ու խնդիրներն արտահայտող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱԾ-ին:
Քոլեջում բացակայում է գնահատման առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների վրա հիմնված ռազմավարական կառավարումը:

Քոլեջում չի իրականացվել կառավարման համակարգի արդյունավետության վերլուծություն և ռազմավարական պլանավորման մեջ չեն ներառվել հնարավոր առկա խնդիրների շտկման գործողություններ: Քոլեջի 2020-2025 թթ. Ռազմավարական ծրագիրը նույնությամբ կրկնում է 2015-2020թթ ՌԾ-ն:
ՄՈՒՀ- ի կառավարումն արդյունքահեն և տվյալահեն չէ, հիմնականում առաջնորդվում է ընթացիկ խնդիրների լուծմամբ՝ առանց երկարաժամկետ զարգացման պլանի:
Քոլեջը փաստացի չի առաջնորդվում սահմանված Ռազմավարական ծրագրով, քանի որ գործողությունների պլանը չի բխում ՌԾ-ից:
ՌԾ-ի և կարճաժամկետ, միջնաժամկետ պլանավորումը և հաշվետվողականության համակարգը փոխկապակցված չեն, տարեկան հաշվետվությունները չեն բխում ՌԾ գործողությունների պլանից:
Կառավարման համակարգում մի շարք մարմինների, ստորաբաժանումների և պաշտոնների գործառույթներ համընկնում են, հստակ չէ գործընթացների ու աշխատանքների բաշխումը:

Որակի ներքին ապահովման համակարգի զարգացման ուղղությամբ կատարվող քայլերը դեռևս անբավարար են, հստակ չեն որակի ապահովման պատասխանատուի գործառույթները:
Ձևավորված չեն տվյալների հավաքագրման և խնդիրների վերհանման կայուն մեխանիզմներ:
ՄՈՒՀ-ը դեռևս չունի որակի ապահովման ներքին համակարգ, որը կնպաստեր հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

2020-2025 թթ. զարգացման ծրագրում ներառված չեն հետազոտության ոլորտում քոլեջի հետաքրքրություններն ու հավակնությունները: Հետազոտական գործունեությունը ռազմավարական առաջնահերթություն չէ: Այդուհանդերձ, ուսանողներին տրվող հանձնարարականներն ու տարաբնույթ ինքնուրույն աշխատանքները պարունակում են հետազոտական բաղադրիչ և ապահովում վերջնարդյունքերով պահանջվող հմտությունների և կարողությունների ձևավորումը,

նպաստում են ուսանողների հետազոտական կարողությունների, վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը:
Քոլեջի դասախոսները մասնագիտական ձեռնարկների, ուսումնաօժանդակ նյութերի, մեթոդական ուղեցույցների, անգլերեն լեզվով զարգացնող խաղի հեղինակներ են: Համատեղությամբ աշխատող, գիտական աստիճան ունեցող դասախոսները զբաղվում են հետազոտական գործունեությամբ:
Քոլեջում գործում է հաշվետվողականության համակարգ, քոլեջը թափանցիկ է էլեկտրոնային և սոցիալական հարթակներում:
ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ: Գործում են նաև հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ՝ հիմնականում Լրացուցիչ կրթության կենտրոնի միջոցով:

ՌԾ-ի զարգացման պլանում, ինչպես նաև գործողությունների պլանում նախատեսված չեն արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության, ընթացակարգերի և մեխանիզմների մշակումներ, ինչպես նաև միջազգայնացման ուղղությամբ միջոցառումներ: Քոլեջը չունի արտաքին կապերի զարգացման գործառույթ իրականացնող ստորաբաժանում կամ հաստիք, և այդ աշխատանքը բաշխված է մի քանի օղակների միջև:

Քոլեջը ակտիվ աշխատանքներ է իրականացնում տեղական կազմակերպությունների հետ համագործակցությունների շրջանակի ընդլայնման և ամրապնդման ուղղությամբ: Արտաքին կապերի օգտագործմամբ կարողանում է ապահովել ՄԿԾ-ների, մասնավորապես, դուալ կրթական ծրագրի արդյունավետ իրականացումը: Կարևորում է ներքին շահակիցների օտար լեզուների իմացության ապահովումը հատկացված դասաժամերի, ինչպես նաև լրացուցիչ միջոցառումների շնորհիվ:
Միջազգայնացման առումով բուհի փորձը դեռևս սահմանափակ է և ազդեցությունը ՄՈՒՀ-ի զարգացման վրա էական չէ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և**

վարչարարություն» և «Որակի ներքին ապահովման համակարգ» ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - ուսանողներին տրվող հետազոտական առաջադրանքները կրթական ծրագրերում ներառելու անհրաժեշտությանը և դրանց գնահատման մեխանիզմների մշակմանը,
   - դասավանդման և ուսումնառության ինտերակտիվ մեթոդների բազմազանեցմանը և կրթական ծրագրերում ներառելու անհրաժեշտությանը,
   - կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման, մշտադիտարկման մեխանիզմների ներդրմանը,
   - նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը,
   - արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության մշակմանը,
   - դասախոսների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպմանը,
   - քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «**Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ**» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2024 թ. փետրվարի 15

ք.Երևան